ԱՄՍՏԵՑԿՅԱՆ ԳԵՂԵՑԿԱՑՈՒՄ
Է ՄԱՐԴՈՒ ՀՈԳԻՆ

Թիթեռնիկը

Թիթեռնիկը մտքում դրեց ամուսնանալ: Եվ, իհարկե, ուզում էր ամենալավ ծաղիկը կնության վերցնել:

Նա շուրջը նայեց. ծաղիկներն իրենց ցողունների վրա նստած էին լուռ ու համեստ, ինչպես վայել է դեռ չնշանված օրիորդներին: Բայց նրանցից հարսնացու ջոկելը շատ դժվար էր. ախր, այնքա՜ն շատ էին:

Շուտով թիթեռնիկը հոգնեց մտածելուց և ճախրեց դաշտային երիցուկի մոտ: Ֆրանսիացիներն այդ ծաղիկը *մարգարտածաղիկ* են կոչում և հավատացնում են, թե նա կարողանում է գուշակություն անել: Համենայն դեպս, սիրահարվածները միշտ վազում են նրա մոտ, պսակաթերթերը պոկոտում իրար հետևից ու ասում. «*Սիրո՞ւմ է, չի՞ սիրում, կպա՜չի՞, կվանի՞, կրծքի՞ն կսեղմի, հոգի՞ս կհանի*»,– կամ թե՝ սրա նման բան. ամեն մեկն իր ձևով է հարցնում: Թիթեռնիկն էլ դիմեց երիցուկին, բայց չսկսեց պոկոտել նրա պսակաթերթերը, այլ՝ համբուրեց դրանք, մտածելով, որ միշտ լավ է փաղաքշանքով գործել:

– Անթառա՛մ մայրիկ, սիրելի՛ դաշտային երիցուկ, ամենահիմաստո՜ւն ծաղիկ,– ասաց նա:– Դուք կարողանում եք գուշակություն անել: Ուրեմն՝ ցո՛ւյց տվեք ինձ իմ բախտը, և ես իսկույն կնշանվեմ:

Բայց երիցուկը լուռ մնաց: Նա նեղացած էր: Չէ՞ որ ինքն էլ օրիորդ էր, և հանկարծ իրեն անվանում են «մայրիկ»: Ինչպե՞ս է դուր գալիս դա ձեզ:

Թիթեռնիկը նորից խնդրեց նրան, հետո էլի մի անգամ, բայց այդպես էլ պատասխան չստացավ: Նա էլ ծանձրացավ ու թռավ նշանվելու:

Վաղ գարուն էր, ամեն տեղ ձնծաղիկներ ու զաֆրաններ էին բացվել:

– Վատը չեն,– ասաց թիթեռնիկը,– սիրուն մատղաշներ են: Միայն թե... շատ կանաչավուն են:

Թիթեռնիկը, ինչպես և բոլոր պատանիները, իրենից մի քիչ տարիքով օրիորդների էր որոնում: Հետո նա դիտեց մյուս ծաղիկները և գտավ, որ պուտերը դառնավուն են, մանուշակները՝ փոքր-ինչ մելամաղձիկ, վարդակակաչները պճնասեր են, նարգիզները՝ հասարակ, լորենու ծաղիկները մանրիկ են, և որքա՜ն էլ շատ են նրանց ազգականները: Խնձորենու ծաղիկները, ճիշտ է՝ վարդի նման են, բայց շատ կարճ կյանք ունեն. քամին փչեց՝ էլ նրանք չկան: Արժե՞ նրանց հետ ամուսնանալ:

Սիսեռի ծաղիկն ամենից ավելի դուր եկավ թիթեռնիկին: Բաց վարդագույն, կարմրա - թուշ, նրբագեղ և ոչ միայն գեղեցիկ, այլև՝ տնարար: Սև աշխատանքից չի խորշում: Մի խոսքով՝ իսկ և իսկ հարսնացու: Թիթեռնիկն արդեն ուզում էր նրա հետ նշանվել, մեկ էլ հանկարծ՝ կողքին տեսավ մի պատիճ, ծայրին՝ թառամած ծաղիկ:

– Այս... ո՞վ է,– հարցրեց թիթեռնիկը:

– Քույրիկս է,– պատասխանեց սիսեռը:

– Ուրեմն՝ դուք է՞լ այդպես եք լինելու:

Թիթեռնիկը վախեցավ և շտապ թռավ հեռու:

Ցանկապատի վրայով այծատերևի մի ամբողջ փունջ էր կախված: Բայց երկարավուն դեղին դեմքերով այդ ծաղիկներն ամենևին թիթեռնիկի ճաշակովը չէին: Վերջապես՝ ի՞նչն էր նրա ճաշակով: Արի՛ ու իմացիր:

Գարունն անցավ, անցավ և ամառը: Եկավ աշունը, բայց թիթեռնիկը նշանվելու համար դեռ մի քայլ էլ չէր արել: Նոր-նոր շքեղ ծաղիկներ բացվեցին, բայց ի՞նչ օգուտ: Կյանքի մայրամուտին մոտենալիս սիրտն ավելի է կարոտում գարնան թարմությանը, պատանեկան կենարար բուրմունքին, բայց այդ ամենը հո՞ չես գտնի աշնանային գեորգինների ու մոլոշավարդերի մեջ: Եվ թիթեռնիկը թռավ գանգուր անանուխի մոտ:

– Ճիշտ է՝ սրա ծաղիկները սիրունատես չեն,– ասում էր նա,– բայց որքա՜ն բուրումնավետ են: Հենց սրա՛ն էլ կին կառնեմ:

Եվ սկսեց հարսնախոսությունը:

Սակայն անանուխն իր ո՛չ մի տերևը չշարժեց, միայն ասաց.

– Մտերմությո՛ւն, ուրիշ ոչինչ: Մենք երկուսս էլ արդեն ծեր ենք: Մտերիմներ կարող ենք լինել, բայց ամուսնանա՞լ... Չէ՛, ի՞նչ կարիք կա՝ ծերության հասակում ծիծաղի առարկա դառնալ:

Այդպես էլ թիթեռնիկը թռավ գնաց դատարկածեռն: Չափից ավելի բծախնդիր էր նա, իսկ դա բանի պետք չէ: Եվ ահա, մնաց քարթու ամուրի:

Շուտով եղանակը վատացավ, անձրև ու ցրտեր սկսվեցին, պաղ քամի փչեց, պառավ, ճռճռան ուռենիների ջանը դող ընկավ: Այդպիսի ցրտին դուրեկան չէր ճախրել ամառվա շորով: Բայց թիթեռնիկը չէր էլ ճախրում. նրան մի օր հաջողվեց թռչել, մի սենյակ մտնել, իսկ այնտեղ վառարան էր վառվում, և ամռան պես տաք էր: Այստեղ, կարծես, թիթեռնիկը կարող էր հանգիստ ապրել: Բայց ի՞նչ կյանք էր՝ չորս պատի մեջ փակված:

– Ինձ հարկավոր են արև, ազատություն և գոնե մի փոքրիկ ծաղիկ,– գոչեց թիթեռնիկը: Ապա վերև թռավ և իսկույն զարկվեց լուսամուտի ապակուն:

Այդտեղ նրան տեսան, հիացան նրա գեղեցկությամբ և, գնդասեղը մարմինը խրելով՝ ամրացրին մի արկղիկի մեջ, ուրիշ հազվագյուտ թիթեռների շարքում: Էլ ուրիշ ի՞նչ կա - ռելի էր անել նրան:

– Հիմա ես էլ ծաղկի պես նստած եմ ցողունի վրա,– ասաց թիթեռնիկը:– Այնքան էլ ուրախ բան չէ: Բայց հո՞ նման է ամուսնության. նստել եմ մի տեղ ամուր, հաստատուն:

Դրանով էլ նա մխիթարվում էր:

– Վատ մխիթարություն է դա,– ասում էին սենյակի ծաղիկները:

«Դե՛, սենյակի ծաղիկներին չպետք է հավատալ,– մտածում էր թիթեռնիկը:– Նրանք մարդկանց հետ չափից ավելի են շփվում»:

E-GIRQ.COM